

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԶԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

**ք. Ե Ր Ե Վ Ա Ն**  
(մարզի կարգավիճակով)

Տարածքը՝	<b>227 քառ. կմ</b>
Գյուղատնտեսական հողատեսքեր՝	<b>8315 հա</b>
<i>այդ թվում՝</i> վարելահողեր	<b>2139 հա</b>
Թաղային համայնքներ՝	<b>12</b>
Բնակչությունը (1999թ. հունվարի 1-ի դրությամբ)՝	<b>1248.7 հազ. մարդ</b>

Երևան քաղաքի բնակչությունը 1998թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 32.9 %-ը:

1998թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում ք. Երևանի տեսակարար կշիռը կազմել է 43.2 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 1.4%-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 71.0%-ը և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 73.9%-ը:

**Երևանը** Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկայիս 48 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում: Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից է և ունի 2.780 տարվա պատմություն (հավերժական քաղաք Հռոմի, Կարթագենի, Նինվեի և Դամասկոսի հասակակիցն է): Գտնվում է մոտավորապես նույն լայնության վրա, ինչ Վաշիգտոնը, Մադրիդը, Պեկինը:

Խորհրդային իշխանության տարիներին գավառական քաղաքից (1920թ. բնակչության թվաքանակը 30 հազարից պակաս էր) ժամանակակից **Երևանը** վերածվել է հանրապետության խոշոր արդյունաբերական (արդյունաբերական ներուժի գրեթե կեսը), մշակութային և գիտական կենտրոնի (ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկների 98%-ը), ինչպես նաև կարևորագույն տրանսպորտային հանգույցի (Երևանում հանգուցվում է Սև ծովը Պարսից ծոցին կապող երկաթգիծը և այն Բաքու-Թիբիլիսի երկաթուղուն միացնող (Երևան-Հրազդան-Իջևան-Աղստաֆա) գիծը, տեղական նշանակություն ունի Երևան-Սևանի ավազան-Սոտք գիծը, ՀՀ գլխավոր օդային դարպասն է իր երկու՝ Չվարթնոց և Էրեբունի միջազգային օդանավակայաններով, անցնում են մի շարք ավտոխճուղիներ): Այստեղ են գտնվում հանրապետության պառլամենտն ու կառավարությունը, բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, դրամատների ու բորսաների ճնշող մեծամասնությունը: Երևանը ՀՀ նախագահի նստավայրն է: Այստեղ են գտնվում նաև արտասահմանյան երկրների դեսպանատները, ՄԱԿ-ի և մյուս միջազգային կազմակերպությունների ու ներկայացուցիչների գրասենյակները:

Երևան քաղաքն ամենախոշորն է բնակչության թվաքանակով, իր մեջ ներառում է 12 թաղեր՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Մեքաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն, ընդգրկելով հանրապետության բնակչության մեկ երրորդը և մոտ 50 անգամ գերազանցելով բնակչության խտության միջին հանրապետական ցուցանիշը:

Երևանը հարուստ է ճարտարապետական կառույցներով, որոնք շարունակել ու զարգացրել են միջնադարյան մայրաքաղաքների և ընդհանրապես հայկական ազգային ճարտարապետության ավանդույթները:

1999թ. հունվարի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են Երևան քաղաքի 41327 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 20140-ը՝ անհատ ձեռնարկատերեր: Առևտրային կազմակերպությունների 90%-ից ավելին կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականության վրա հիմնված, գլխավորապես առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության, անշարժ գույքի գործառնությունների, շինարարության և այլ առևտրային գործունեության (86%) օբյեկտներ են:

**Ե Ր Ե Վ Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Ի Թ Ա Ղ Ա Յ Ի Ն  
Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ն Ե Ր Ի Բ Ն Ա Կ Չ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը  
1999 թ. հունվարի 1-ի դրությամբ**

*հազ. մարդ*

Թաղային համայնքի անվանումը	Բնակչության թվաքանակը
ք. Երևան, ընդամենը	1248.7
Աջափնյակ	125.9
Ավան	50.5
Արաբկիր	151.4
Դավիթբաշեն	50.7
Էրեբունի	126.5
Կենտրոն	180.5
Մալաթիա-Սեբաստիա	159.6
Նոր Նորք	131.5
Նորք-Մարաշ	14.6
Նուբարաշեն	9.3
Շենգավիթ	145.5
Քանաքեռ-Զեյթուն	102.7

Հաշվարկները կատարվել են հիմք ընդունելով 1996թ. «Երևան նախագիծ» պետական ձեռնարկության կողմից ներկայացված առանձին համայնքների բնակչության թվաքանակը, տարածքային ՔԱԿԳ բաժիններից ստացված ծնվածների և մահացածների ակտերը, ինչպես նաև ՀՀ ՆԳ նախարարության անձնագրային ծառայություններից ստացված եկողների և մեկնողների կտրոնները:

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

## Կենտրոնը՝ ք. Աշտարակ

Տարածքը՝	<b>2753 քառ. կմ</b>
Գյուղատնտեսական հողատեսքեր՝	<b>136667 հա</b>
<i>այդ թվում՝</i> վարելահողեր՝	<b>55771 հա</b>
Քաղաքային համայնքներ	<b>3</b>
Գյուղական համայնքներ՝	<b>111</b>
Գյուղական բնակավայրեր՝	<b>116</b>
Բնակչությունը (1999թ. հունվարի 1-ի դրությամբ)	<b>166.7 հազ. մարդ</b>
<i>այդ թվում՝</i> քաղաքային՝	<b>46.9 հազ. մարդ</b>
գյուղական՝	<b>119.8 հազ. մարդ</b>

Արագածոտնի մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9.3%-ը: Մարզի բնակչությունը 1998թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 4.4 %-ը:

1998թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում Արագածոտնի մարզի տեսակարար կշիռը կազմել է 1.6 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 9.1%-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 1.1%-ը և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 1.4%-ը:

**Արագածոտնի մարզն (մարզկենտրոնը՝ ք.Աշտարակ)** իր անունը ժառանգել է պատ-մական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից: Այն գտնվում է մայրաքաղաք Երևանի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթի՝ Արագածի (4090 մ) միջև: Մարզի տարածքն արևմուտ-քում ձգվում է մինչև Թուրքիայի հետ պետական սահմանը: Մարզն իր մեջ ընդգրկում է Աշտարակ-կի, Ապարանի, Արագածի և Թալինի տարածաշրջանները: Արագածոտնի մարզում են գտնվում Աշտարակ, Ապարան և Թալին քաղաքները, ինչպես նաև 116 գյուղական բնակավայրեր: Բնակչու-թյան 72%-ը բնակվում է գյուղերում (գյուղական բնակչության ամենաբարձր տոկոսն է հանրա-պետության մարզերի կտրվածքով):

Մարզի տարածքով անցնում են հանրապետական նշանակության 3 ավտոխճուղիներ՝ Երևան - Աշտարակ - Թալին - Գյումրի, Երևան - Աշտարակ - Ապարան - Սպիտակ, Երևան -Ար-մավիր - Քարակերտ - Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով, ուստի մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում):

Մարզի տարածքով մեկ ցրված են միջնադարյան բազմաթիվ կառույցներ: Հայտնի են հատ-կապես Ամբերդը, Թալինի, Սաղմոսավանի, Աշտարակի եկեղեցիներն ու վանքերը:

Մարզում է գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը:

Մարզի ներկայիս տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է (խաղողա-գործություն, այգեգործություն, հացահատիկային տնտեսություն և անասնապահություն):

Արդյունաբերությունը հենվում է տեղում արտադրվող գյուղատնտեսական մթերքների վե-րամշակման և շինանյութերի հանքավայրերի շահագործման վրա: Ամենազարգացած ճյուղը սննդի

արդյունաբերությունն է: Ջգալի է նաև շինանյութերի, թեթև և մեքենաշինական արդյունաբերության առանձին ճյուղերի տեսակարար կշիռը:

1999թ. հունվարի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են Արագածոտնի մարզի 2747 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 1634-ը՝ անհատ ձեռնարկատերեր: Առևտրային կազմակերպությունների 88 տոկոսից ավելին կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականու-թյան վրա հիմնված, գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերա-մշակող արդյունաբերության (75%) օբյեկտներ են:

**Աշտարակ** քաղաքը (մարզկենտրոն՝ 1995թ.) գտնվում է Քասաղ գետի ափին, Երևանից 20 կմ հյուսիս-արևմուտք, հիմնադրվել է 9-րդ դարում: Այժմ քաղաքում բնակվում է 29.7 հազ.բնակիչ, համարվում է Երևան-Գյումրի, Երևան-Սպիտակ ճանապարհների հանգույց:

Աշտարակ քաղաքը զարգացել է որպես Երևանի արբանյակ քաղաք: Կատարում է մարզի ընդարձակ տարածքի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կազմակերպիչ կենտրոնի գործառնություն: Գործում են գիտական հաստատություններ, ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություններ (առանձնանում է հատկապես «Աշտարակ կաթ» ՓԲԸ), կրթական, մշակութային ու առողջապահական հիմնարկներ:

Մարզկենտրոնի հարևանությամբ գտնվող Օշական գյուղում հայ գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմ-դամբարանն է:

**Ապարան** քաղաքը (10.3 հազ.բնակիչ) մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Քասաղ գետի ափին (Երևանից 59 կմ հեռավորությամբ):

**Թալին** քաղաքը (7.6 հազ.բնակիչ) գտնվում է Արագածի հարավ-արևմտյան լանջին: Քաղաքի շրջակայքում հայտնաբերվել են հնագույն բնակավայրի հետքեր (Ն.ք. II հազարամյակ):

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Աշտարակ	ք. Աշտարակ գ. Մոլոնի
Ապարան Թալին	ք. Ապարան ք. Թալին

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ագարակ (Աշտարակի տարածաշրջան)	Ագարակ
Ագարակ (Թալինի տարածաշրջան)	Ագարակ
Ալագյազ	Ալագյազ
Ակունք	Ակունք
Աղձք	Աղձք
Ամրե թագա	Ամրե թագա
Անտառուտ	Անտառուտ
Աշնակ	Աշնակ
Ավան	Ավան
	Խնուսիկ
Ավթոնա	Ավթոնա
Ավշեն	Ավշեն
Արագած (Ապարանի տարածաշրջան)	Արագած
Արագած (Թալինի տարածաշրջան)	Արագած
Արագածոտն	Արագածոտն

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Արա	Արա
Արեգ	Արեգ
Արտաշավան	Արտաշավան
	Լուսադբյուր
	Նիգատուն
Արտենի	Արտենի
Արուճ	Արուճ
Ափնագյուղ	Ափնագյուղ
Բազմադրբյուր	Բազմադրբյուր
Բայազ	Բայազ
Բառոժ	Բառոժ
Բերքառատ	Բերքառատ
Բյուրական	Բյուրական
Գառնհովիտ	Գառնհովիտ
Գեղաղիր	Գեղաղիր
Գեղաձոր	Գեղաձոր
Գեղարոտ	Գեղարոտ
Գետափ	Գետափ
Գյալթո	Գյալթո
Դաշտաղեն	Դաշտաղեն
Դավթաշեն	Դավթաշեն
Դերեկ	Դերեկ
Դիան	Դիան
Դպրեվան	Դպրեվան
Եղիպատրուշ	Եղիպատրուշ
Եղնիկ	Եղնիկ
Երնջատափ	Երնջատափ
Զարինջա	Զարինջա
Զովասար	Զովասար
Թքուջուր	Թքուջուր
Թլիկ	Թլիկ
Իրինդ	Իրինդ
Լեռնապար	Լեռնապար
Լեռնարոտ	Լեռնարոտ
Լուսագյուղ	Լուսագյուղ
Լուսակն	Լուսակն
Ծաղկահովիտ	Ծաղկահովիտ
Ծաղկաշեն	Ծաղկաշեն
Ծաղկասար	Ծաղկասար
Ծիլքար	Ծիլքար
Կաթնադրբյուր	Կաթնադրբյուր
Կարբի	Կարբի
Կարմրաշեն	Կարմրաշեն
Կաքավաձոր	Կաքավաձոր
Կոշ	Կոշ
Հակկո	Հակկո
Հարթավան	Հարթավան
Հացաշեն	Հացաշեն
Հնաբերդ	Հնաբերդ
Ձորագլուխ	Ձորագլուխ
Ղաբաղթափա	Ղաբաղթափա
Ղազարավան	Ղազարավան
Մաստարա	Մաստարա
	Ձորագյուղ
Մելիքգյուղ	Մելիքգյուղ
Սիրաք	Սիրաք
Մուլքի	Մուլքի
Ներքին	Ներքին
Բազմաբերդ	Բազմաբերդ
Ներքին	Ներքին
Սասունաշեն	Սասունաշեն
Նիգավան	Նիգավան

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Նոր Ամանոս	Նոր Ամանոս
Նորաշեն (Ապարանի տարածաշրջան)	Նորաշեն
Նորաշեն (Արագածի տարածաշրջան)	Նորաշեն
Նոր Արթիկ	Նոր Արթիկ
Նոր Եղեսիա	Նոր Եղեսիա
Շամիրամ	Շամիրամ
Շենավան	Շենավան
Շենկանի	Շենկանի
Շղարշիկ	Շղարշիկ
Ոսկեթաս	Ոսկեթաս
Ոսկեհատ	Ոսկեհատ
Ոսկեվազ	Ոսկեվազ
Չքնաղ	Չքնաղ
Պարտիզակ	Պարտիզակ
Ջամշլու	Ջամշլու
Ջրամբար	Ջրամբար
Ռ-յա Թագա	Ռ-յա Թագա
Սաղմոսավան	Սաղմոսավան
Սանգյառ	Սանգյառ
Սասունիկ	Սասունիկ
	Կարին
Սարայանց	Սարայանց
Սիփան	Սիփան
Սորիկ	Սորիկ
Սուսեր	Սուսեր
Վարդաբլուր	Վարդաբլուր
Վարդենիս	Վարդենիս
Վարդենուտ	Վարդենուտ
Վերին Բազմաբերդ	Վերին Բազմաբերդ
Վերին Սասունաշեն	Վերին Սասունաշեն
Վերին Սասունիկ	Վերին Սասունիկ
Տեղեր	Տեղեր
Յամաքասար	Յամաքասար
Ուշի	Ուշի
Ուջան	Ուջան
Փարպի	Փարպի
Քուչակ	Քուչակ
Օհանավան	Օհանավան
Օշական	Օշական
Օրգով	Օրգով
Օրթաճյա	Օրթաճյա

# Ա Ր Ա Ր Ա Տ Ի Մ Ա Ր Ձ

## Կենտրոնը՝ ք. Արտաշատ

Տարածքը՝	<b>2096 քառ. կմ</b>
Գյուղատնտեսական հողատեսքեր՝	<b>88700 հա</b>
<i>այդ թվում՝</i> վարելահողեր՝	<b>28345 հա</b>
Քաղաքային համայնքներ	<b>4</b>
Գյուղական համայնքներ	<b>93</b>
Գյուղական բնակավայրեր	<b>94</b>
Բնակչությունը (1999թ. հունվարի 1-ի դրությամբ)՝	<b>310.0 հազ. մարդ</b>
<i>այդ թվում՝</i> քաղաքային՝	<b>98.7 հազ. մարդ</b>
գյուղական՝	<b>211.3 հազ. մարդ</b>
<p>Արարատի մարզի բնակչությունը 1998թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.2%-ը:</p> <p>1998թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում Արարատի մարզի տեսակարար կշիռը կազմել է 4.9 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 14.7 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 2.9 %-ը և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 3.0 %-ը:</p>	

Արարատի մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառի մի մասը (այստեղ էին գտնվում Արտաշատ և Դվին մայրաքաղաքները): Մարզը գտնվում է հանրապետության հարավ-արևմտյան մասում, գրավում է Արարատյան դաշտի զգալի մասը: Սահմանակից է Թուրքիային և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Մարզն ընդգրկում է 4 քաղաք և 94 գյուղ՝ զբաղեցնելով ՀՀ տարածքի 7%-ը, բնակչության մոտ 70%-ը բնակվում է գյուղերում: Տնտեսության զարգացման համար կարևոր է Երևան քաղաքի հետ անմիջական հարևանությունը:

Մարզում է գտնվում Խոսրովի պետական արգելոցը, Խոր Վիրապի վանքը և Պարույր Սևակի տուն-թանգարանը (գյուղ Չանգակատուն):

Արարատը տնտեսապես զարգացած մարզերից է: Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն մասնագիտանում է խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբուծության, ինչպես նաև կաթնամսատու ուղղության անասնապահության գծով:

1999թ. հունվարի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են Արարատի մարզի 6027 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 4210-ը՝ անհատ ձեռնարկատերեր: Առևտրային կազմակերպությունների 88.3%-ը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականության վրա հիմնված, գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության (77%) օբյեկտներ են:

**Արտաշատ** քաղաքը (35.0 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 29 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10 կմ հյուսիս-արևմուտք): Քաղաքն ունի բազմաճյուղ արդյունաբերություն (գինու, մրզի պահածոների, կաթի, հախճապակու, խեցեգործական իրերի, կահույքի ու մանվածքային գործարաններ): Ընդարձակվել է կրթական մշակութային ու առողջապահական հիմնարկների ցանցը: Քաղաքի տնտեսական կյանքում երկրագործությունն ու անասնապահությունը դեռևս մեծ տեղ են գրավում:



**Արարատ** քաղաքը (22.2 հազ.բնակիչ) գտնվում է Երևանից 48 կմ հեռավորության վրա: Հայտնի է որպես ծանր արդյունաբերության կենտրոն. այստեղ է գտնվում ցեմենտի գործարանը և ոսկու կորզման՝ Հայաստանում միակ ֆաբրիկան:

**Մասիս** քաղաքը (27.1 հազ.բնակիչ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին: Գործում են թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկություններ:

**Վեդի** քաղաքին (14.4 հազ. բնակիչ) նույնպես բնորոշ են սննդի (օդու, գինու, պահածոների արտադրություն) և թեթև արդյունաբերության ճյուղերը:

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Արտաշատ	ք. Արտաշատ
Արարատ	ք. Արարատ
Մասիս	ք. Մասիս
Վեդի	ք. Վեդի

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Աբովյան	Աբովյան
Ագատաշեն	Ագատաշեն
Ագատավան	Ագատավան
Այգավան	Այգավան
Այգեգարդ	Այգեգարդ
Այգեպատ	Այգեպատ
Այգեստան	Այգեստան
Այնթափ	Այնթափ
Ավշար	Ավշար
Արալեգ	Արալեգ
Արարատ	Արարատ
Արաքսավան	Արաքսավան
Արբաթ	Արբաթ
Արգավանդ	Արգավանդ
Արմաշ	Արմաշ
Արևաբույր	Արևաբույր
Արևշատ	Արևշատ
Բաղրամյան	Բաղրամյան
Բարձրաշեն	Բարձրաշեն
	Կաթավաբերդ
Բերդիկ	Բերդիկ
Բերքանուշ	Բերքանուշ
Բյուրավան	Բյուրավան
Բուրաստան	Բուրաստան
Գեղանիստ	Գեղանիստ
Գետազատ	Գետազատ
Գետափնյա	Գետափնյա
Գոռավան	Գոռավան
Դալար	Դալար
Դաշտավան	Դաշտավան
Դաշտաքար	Դաշտաքար
Դարակերտ	Դարակերտ
Դարբնիկ	Դարբնիկ
Դեղձուտ	Դեղձուտ
Դիմիտրով	Դիմիտրով
Դիտակ	Դիտակ

Հանայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Դվին	Դվին
Եղեգնավան	Եղեգնավան
Երասխ	Երասխ
Չանգակատուն	Չանգակատուն
Չորակ	Չորակ
Լանջագատ	Լանջագատ
Լանջանիստ	Լանջանիստ
Լանջառ	Լանջառ
Լուսաշող	Լուսաշող
Լուսառատ	Լուսառատ
Խաչփառ	Խաչփառ
Կանաչուտ	Կանաչուտ
Հայանիստ	Հայանիստ
Հնաբերդ	Հնաբերդ
Հովտաշատ	Հովտաշատ
Հովտաշեն	Հովտաշեն
Դուկասավան	Դուկասավան
Մասիս	Մասիս
Մարմարաշեն	Մարմարաշեն
Մխչյան	Մխչյան
Մրգանուշ	Մրգանուշ
Մրգավան	Մրգավան
Մրգավետ	Մրգավետ
Նարեկ	Նարեկ
Նիգամի	Նիգամի
Նշավան	Նշավան
Նոյակերտ	Նոյակերտ
Նորաբաց	Նորաբաց
Նորամարգ	Նորամարգ
Նորաշեն	Նորաշեն
Նոր Խարբերդ	Նոր Խարբերդ
Նոր կյանք	Նոր կյանք
Նոր Կյուրիմ	Նոր Կյուրիմ
Նոր ուղի	Նոր ուղի
Շահումյան	Շահումյան
Շաղափ	Շաղափ
Ոսկետափ	Ոսկետափ
Ոստան	Ոստան
Պարույր Սևակ	Պարույր Սևակ
Ջրահովիտ	Ջրահովիտ
Ջրաշեն	Ջրաշեն
Ռանչպար	Ռանչպար
Սայաթ -Նովա	Սայաթ -Նովա
Սիս	Սիս
Սիսավան	Սիսավան
Սիփանիկ	Սիփանիկ
Սուրենավան	Սուրենավան
Վանաշեն	Վանաշեն
Վարդաշատ	Վարդաշատ
Վարդաշեն	Վարդաշեն
Վեդու գինու գործարան	Վեդու գինու գ-ին կից
Վերին Արտաշատ	Վերին Արտաշատ
Վերին Դվին	Վերին Դվին
Տափերական	Տափերական
Ուրցականջ	Ուրցականջ
Ուրցաձոր	Ուրցաձոր
Փոքր Վեդի	Փոքր Վեդի
Քաղցրաշեն	Քաղցրաշեն

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## Կենտրոնը՝ ք. Արմավիր

Տարածքը՝	1242 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր՝	80711 հա
<i>այդ թվում՝</i> վարելահողեր՝	36243 հա
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	94
Գյուղական բնակավայրեր	95
Բնակչությունը (1999թ. հունվարի 1-ի դրությամբ)՝	321.1 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i> քաղաքային՝	122.7 հազ.մարդ
գյուղական՝	198.4 հազ.մարդ
<p>Արմավիրի մարզի բնակչությունը 1998թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 8.4 %-ը:</p> <p>1998թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում Արմավիրի մարզի տեսակարար կշիռը կազմել է 9.3 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 17.4 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 4.6 %-ը և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 2.0 %-ը:</p>	

Արմավիրի մարզը (*կենտրոնը՝ ք.Արմավիր*) տարածքի մեծությամբ ամենափոքրն է, գտնվում է Արարատյան դաշտում՝ հանրապետության տարածքի արևմուտքում: Մարզը սահմանակից է Թուրքիային, որից բաժանվում է Արաքս և դրա վտակ Ախուրյան գետերով: Զբաղեցնում է ՀՀ տարածքի 4.2%-ը: Բնակչության 60%-ից ավելին բնակվում է գյուղերում:

Արմավիրի մարզը հարուստ է բնական ու պատմական բացառիկ հուշարձաններով: Դրանցից եզակի է Մեծամորի բլրի լանջին պեղված 5000-ամյա հնության (բրոնզեդարյան) մետաղաձուլարանը: Պատմազիտական մեծ արժեք են ներկայացնում Արգիշտիխինի ուրարտական քաղաքի ավերակները, ինչպես նաև Արաքս գետի նախկին հունի ձախ ափին գտնվել է հայոց առաջին մայրաքաղաքը՝ Արմավիրը, որը դարեր շարունակ եղել է տնտեսական ու մշակութային կենտրոն ու մնացել այդպիսին մինչև նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի հիմնադրումը: Դրանցից քիչ արևմուտք հայտնաբերվել են Երվանդունիների մայրաքաղաքի՝ Երվանդաշատի փլատակները:

Արմավիրի մարզն իր մեջ ընդգրկում է Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի տարածաշրջանները: Մարզն իր մեջ ներառում է 3 քաղաք՝ Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր և 95 գյուղ: Արմավիրը Արարատի մարզի հետ միասին ՀՀ ամենազարգացած գյուղատնտեսություն ունեցող մարզն է: Առաջատար ճյուղերը խաղողագործությունը, պտղաբուծությունն ու բանջարաբուծությունն են: Արմավիրի մարզում ևս գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանն արհեստական ոռոգումն է: Տեղական գյուղատնտեսական հումքի վերամշակման համար կառուցվել են գինու, կոնյակի ու պահածոների գործարաններ: Արդյունաբերության ճյուղերից են մետաղամշակումը, սարքաշինությունը, կահույքագործությունը, շինանյութերի արտադրությունը (Արմավիր և Վաղարշապատ քաղաքներ):

1999թ. հունվարի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են Արմավիրի մարզի 5937 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 3935-ը՝ անհատ ձեռնարկատերեր: Առևտրային կազմակերպությունների մոտ 90 տոկոսը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականության վրա հիմնված, գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության (76%) օբյեկտներ են:

**Արմավիր** քաղաքը (նախկինում՝ Սարդարապատ, ապա Հոկտեմբերյան, 44.7 հազ.բնակիչ, հեռավորությունը Երևանից 48 կմ է), հանրապետության երիտասարդ ու արագ զարգացող քաղաքներից է, որի արդյունաբերության համախառն արտադրանքի գրեթե 40 տոկոսը բաժինն է ընկնում սննդի արդյունաբերությանը, զարգացած են նաև հաստոցաշինությունը, մեքենաշինությունը, թեթև և շինանյութերի արդյունաբերությունը:

**Վաղարշապատ** (1945-95թթ.՝ Էջմիածին) քաղաքը (65.5 հազ. բնակիչ) հիմնադրվել է ն.ք. II դարում: Բ.հ. 163թ.՝ հռոմեացիների կողմից Արտաշատ քաղաքի ավերումից հետո, Վաղարշապատը դառնում է Հայաստանի մայրաքաղաքը և մի քանի դար շարունակ հանդիսանում քաղաքական, մշակութային, իսկ հետո նաև հոգևոր ու լուսավորչական կենտրոն: Քաղաքում է գտնվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը 301թ. հիմնադրվել է Հայաստանում քրիստոնեության տարածող, առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի կողմից: Տաճարը հանդիսանում է Հայաստանի առաջին քրիստոնեական եկեղեցին և առաջիններից մեկը ողջ քրիստոնեական աշխարհում: Այս-տեղ են, ըստ ավանդության, թագադրվել հայ թագավորները:

**Մեծամոր** քաղաքը (12,5 հազ.բնակիչ) Հայկական ատոմակայանի բնակելի ավանն է (հիմնադրվել է 1969թ.): 1979թ. շահագործման հանձնվեց Հայկական ատոմակայանը՝ 815 հազ. կվտ հզորությամբ:

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Արմավիր	ք. Արմավիր
Վաղարշապատ	ք. Վաղարշապատ
Մեծամոր	ք. Մեծամոր

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ակնալիճ	Ակնալիճ
Ակնաշեն	Ակնաշեն
Աղավնատուն	Աղավնատուն
Ամասիա	Ամասիա
Ամբերդ	Ամբերդ
Այգեկ	Այգեկ
Այգեշատ (Արմավիրի տարածաշրջան)	Այգեշատ
Այգեշատ (Էջմիածնի տարածաշրջան)	Այգեշատ
Ապագա	Ապագա
Առատաշեն	Առատաշեն
Արագած	Արագած
Արագափ	Արագափ
Արաքս (Արմավիրի տարածաշրջան)	Արաքս
Արաքս (Էջմիածնի տարածաշրջան)	Արաքս
Արզավանդ	Արզավանդ
Արզինա	Արզինա
Արմավիր	Արմավիր
Արշալույս	Արշալույս
Արտամետ	Արտամետ
Արտաշար	Արտաշար
Արտիմետ	Արտիմետ
Արևադաշտ	Արևադաշտ
Արևաշատ	Արևաշատ
Արևիկ	Արևիկ
Բագարան	Բագարան
Բաղրամյան (Բաղրամյանի տարածաշրջան)	Բաղրամյան
Բաղրամյան (Էջմիածնի տարածաշրջան)	Բաղրամյան
Բամբակաշատ	Բամբակաշատ
Բերքաշատ	Բերքաշատ
Գայ	Գայ
Գետաշեն	Գետաշեն
Գրիբոյեդով	Գրիբոյեդով

<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրերի անվանումը</b>
Դալարիկ	Դալարիկ
Դաշտ	Դաշտ
Դողս	Դողս
Եղեգնուտ	Եղեգնուտ
Երասխահուն	Երասխահուն
Երվանդաշատ	Երվանդաշատ
Զարթոնք	Զարթոնք
Ժղանով	Ժղանով
Լենուդի	Լենուդի
Լեռնագոգ	Լեռնագոգ
Լեռնամերձ	Լեռնամերձ
Լուկաշին	Լուկաշին
Լուսագյուղ	Լուսագյուղ
Խանջյան	Խանջյան
Խորոնք	Խորոնք
Ծաղկալանջ	Ծաղկալանջ
Ծաղկունք	Ծաղկունք
Ծիածան	Ծիածան
Կողբավան	Կողբավան
Հայթաղ	Հայթաղ
Հայկաշեն	Հայկաշեն
Հայկավան	Հայկավան
Հացիկ	Հացիկ
Հոկտեմբեր	Հոկտեմբեր
Հովտամեջ	Հովտամեջ
Հուշակերտ	Հուշակերտ
Ձերժինակի	Ձերժինակի
Մարգարա	Մարգարա
Մեծամոր	Մեծամոր
Մերձավան	Մերձավան
Մյասնիկյան	Մյասնիկյան
Մրգաշատ	Մրգաշատ
Մրգաստան	Մրգաստան
Մուսալեռ	Մուսալեռ
Նալբանդյան	Նալբանդյան
Նոր Արմավիր	Նոր Արմավիր
Նոր Արտագես	Նոր Արտագես
Նորակերտ	Նորակերտ
Նորապատ	Նորապատ
Նորավան	Նորավան
Նոր Կեսարիա	Նոր Կեսարիա
Շահումյան	Շահումյան
Շահումյանի թոչնաֆաբրիկա	Շահումյանի թոչնաֆաբրիկա
Շենավան	Շենավան
Շենիկ	Շենիկ
Ոսկեհատ	Ոսկեհատ
Պտղունք	Պտղունք
Ջանֆիղա	Ջանֆիղա
Ջրաշեն	Ջրաշեն
Ջրառատ	Ջրառատ
Ջրառատի թոչնաֆաբրիկա	Ջրառատի թոչնաֆաբրիկա
Սամաղար	Սամաղար
Սովետական	Սովետական
Վանանդ	Վանանդ
Վարդանաշեն	Վարդանաշեն
Տավորիկ	Տավորիկ
Տանձուտ	Տանձուտ
Տարոնիկ	Տարոնիկ
Փարաքար	Փարաքար Թախրով
Փշատավան	Փշատավան
Քարակերտ	Քարակերտ
Ֆերիկ	Ֆերիկ

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

### Կենտրոնը՝ ք. Գավառ

Տարածքը՝	<b>5348 քառ. կմ</b>
Գյուղատնտեսական հողատեսքեր՝	<b>240033 հա</b>
<i>այդ թվում՝</i> վարելահողեր՝	<b>95148 հա</b>
Քաղաքային համայնքներ	<b>5</b>
Գյուղական համայնքներ	<b>87</b>
Գյուղական բնակավայրեր	<b>93</b>
Բնակչությունը (1999թ. հունվարի 1-ի դրությամբ)՝	<b>277.6 հազ. մարդ</b>
<i>այդ թվում՝</i> քաղաքային	<b>102.0 հազ. մարդ</b>
գյուղական	<b>175.6 հազ. մարդ</b>
<p>Գեղարքունիքի մարզի բնակչությունը 1998թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 7.3 %-ը:</p> <p>1998թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում Գեղարքունիքի մարզի տեսակարար կշիռը կազմել է 3.1 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 15.2 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 2.7%-ը և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 2.2%-ը:</p>	

Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Մահմանակից է Ադրբեջանին: Գեղարքունիքի մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի (նախկին՝ Կրասնոսելսկ), Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները: Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 93 գյուղ, զբաղեցնելով ՀՀ տարածքի 18 %-ը (ամենախոշոր մարզն է ըստ տարածքի): Բնակչության մոտ 65%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում լճից ազատված տարածքներից հայտնաբերված մինչև 5000-ամյա հնության դամբարանները: Այստեղ շատ են հանդիպում միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, բայց առանձնապես ուշագրավ են բնական հուշարձանները՝ խառնարանային լճերը, խարամային կոները, ընդարձակ «քարային ծովերը»:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, որի գլխավոր ճյուղերն են հացահատիկային տնտեսությունը (հատկապես ցորենի մշակումը), կարտոֆիլագործությունը և անասնապահությունը: Գեղարքունիքի մարզը մշտապես եղել է և այժմ էլ մնում է Հայաստանի բնակչությանը թարմ ձուկ մատակարարող հիմնական շրջանը:

Մարզի արդյունաբերության մասնագիտացումը պայմանավորված է աշխատանքային ռեսուրսների ավելցուկով և գյուղատնտեսական հումքի առկայությամբ: այդ պատճառով սննդի արդյունաբերությունից բացի այստեղ առաջին հերթին զարգանում են մեքենաշինության աշխա-

տատար արտադրությունները, որոնք ստեղծվել են մարզի քաղաքներում, ինչպես նաև մի քանի գյուղերում:

Գեղարքունիքի մարզում է գտնվում Սոտքի ոսկու խոշոր հանքավայրը, որին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող ոսկու հանքաքարի մեծ մասը:

1999թ. հունվարի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են Գեղարքունիքի մարզի 4351 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 1927-ը՝ անհատ ձեռնարկատերեր: Առևտրային կազմակերպությունների 91 տոկոսը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականության վրա հիմնված գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության օբյեկտներ են:

Մարզկենտրոնը **Գավառ** (նախկինում՝ Նոր Բայազետ, Կամո) քաղաքն է (34.3 հազ. բնակիչ), գտնվում է Երևանից 98 կմ հեռավորության վրա: Հիմնադրել են Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից 1830թ. վերաբնակեցված հայերը՝ պատմական Գավառականի տեղում:

Այսօր քաղաքը հանրապետության արդյունաբերական խոշոր կենտրոններից է: Կան սարքաշինական, էլեկտրատեխնիկական, տեքստիլ ու սննդի արդյունաբերության խոշոր գործարաններ, ինչպես նաև կրթական, մշակութա-լուսավորչական ու առողջապահական՝ մարզային նշանակության կենտրոններ:

**Սևան** քաղաքը (նախկին՝ Ելենովկա, 30.9 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Հիմնադրել են անցյալ դարում Ռուսաստանից աքսորված ռուս աղանդավորները: Քաղաքում գործում են շինարարական խոշոր մեքենաների նորոգման, լուսատեխնիկական, ապակե էլեկտրամեկուսիչների գործարանները, հացամթերքի կոմբինատը, “Չուկկոմբինատը” և այլն:

**Մարտունի** (14,5 հազ.բնակիչ) քաղաքը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղը արդյունաբերությունն է: Գործում են էլեկտրատեղակայման իրերի, պահածոների, հացի, պանրի գործարանները, սննդի կոմբինատը, “Հայգորգ” արտադրական միավորման Մարտունու մասնաճյուղը, շինարարական տրեստը, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի երկրագործության ԳՀԻ-ի փորձակայանը և այլն:

**Վարդենիս** (17,6 հազ. բնակիչ) քաղաքի առաջատար ճյուղն արդյունաբերությունն է (Երևանից 168 կմ): Գործում են շինանյութերի կոմբինատը, պանրի և հացի գործարանները, գորգագործական ֆաբրիկան և այլն:

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Գավառ	ք. Գավառ
Ճամբարակ	ք. Ճամբարակ
Մարտունի	ք. Մարտունի
Սևան	ք. Սևան
	գ. Գագարին
Վարդենիս	ք. Վարդենիս

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրերի անվանումը</b>
Ազատ	Ազատ
Ախարածոր	Ախարածոր
Ակունք	Ակունք
Աղբերք	Աղբերք
Այգուտ	Այգուտ
	Ձիվիխլու
Այրք	Այրք
Անտառամեջ	Անտառամեջ
Աստղածոր	Աստղածոր
Ավազան	Ավազան
Արեգունի	Արեգունի
Արծվանիստ	Արծվանիստ
Արծվաշեն	Արծվաշեն
Արտանիշ	Արտանիշ
Արփունք	Արփունք
Բերդկունք	Բերդկունք
Գանձակ	Գանձակ
Գեղամաբակ	Գեղամաբակ
Գեղամասար	Գեղամասար
Գեղամավան	Գեղամավան
Գեղարքունիք	Գեղարքունիք
Գեղաքար	Գեղաքար
Գեղիովիտ	Գեղիովիտ Յանրդ Լեռնահովիտ
Գետիկ	Գետիկ
Դարանակ	Դարանակ
Դրմաշեն	Դրմաշեն
Դարաբակ	Դարաբակ
Դրախտիկ	Դրախտիկ
Երանոս	Երանոս
Ջոլաքար	Ջոլաքար
Ջովաբեր	Ջովաբեր
Թագագյուղ	Թագագյուղ
Թթուջուր	Թթուջուր
Լանջաղբյուր	Լանջաղբյուր
Լիճք	Լիճք
Լճաշեն	Լճաշեն
Լճավան	Լճավան
Լճափ	Լճափ
Լուսակունք	Լուսակունք
Խաչաղբյուր	Խաչաղբյուր
Ծակքար	Ծակքար
Ծաղկաշեն	Ծաղկաշեն
Ծաղկունք	Ծաղկունք
Ծափաթաղ	Ծափաթաղ
Ծովագյուղ	Ծովագյուղ
Ծովագարդ	Ծովագարդ
Ծովակ	Ծովակ
Ծովինար	Ծովինար
Կալավան	Կալավան
	Բարեպատ
Կախակն	Կախակն
Կարճաղբյուր	Կարճաղբյուր
Կարմիրգյուղ	Կարմիրգյուղ
Կուք	Կուք
Կուտական	Կուտական Աղոխուշ
Հայրավանք	Հայրավանք



<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրերի անվանումը</b>
Չորագյուղ	Չորագյուղ
Չորավանք	Չորավանք
Մաղինա	Մաղինա
Մարտունի	Մարտունի
Մաքենիս	Մաքենիս
Մեծ Մասրիկ	Մեծ Մասրիկ
Ներքին Գետաշեն	Ներքին Գետաշեն
Ներքին Շորժա	Ներքին Շորժա
Նորաբակ	Նորաբակ
Նորակերտ	Նորակերտ
Նորաշեն	Նորաշեն
Նորատուս	Նորատուս
Շատչրեք	Շատչրեք
Շատվան	Շատվան
Շորժա	Շորժա
Չկալովկա	Չկալովկա
Ջաղացածոր	Ջաղացածոր
Ջիլ	Ջիլ
Մարուխան	Մարուխան
Մեմյոնովկա	Մեմյոնովկա
Սոթք	Սոթք
Վահան	Վահան
Վաղաշեն	Վաղաշեն
Վանևան	Վանևան
Վարդածոր	Վարդածոր
Վարդենիկ	Վարդենիկ
Վարսեր	Վարսեր
Վերին Գետաշեն	Վերին Գետաշեն
Վերին Շորժա	Վերին Շորժա
Տորֆավան	Տորֆավան
Տրետուք	Տրետուք
Փամբակ	Փամբակ
Փոքր Մասրիկ	Փոքր Մասրիկ

# ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

## Կենտրոնը՝ ք. Վանաձոր

Տարածքը՝	3789 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր՝	192212 հա
այդ թվում՝ վարելահողեր՝	47823 հա
Քաղաքային համայնքներ	8
Գյուղական համայնքներ	105
Գյուղական բնակավայրեր	122
Բնակչությունը (1999թ. հունվարի 1-ի դրությամբ)՝	394.1 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	265.6 հազ. մարդ
գյուղական	128.5 հազ. մարդ

Լոռու մարզի բնակչությունը 1998թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 10.4 %-ը:

1998թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում Լոռու մարզի տեսակարար կշիռը կազմել է 5.3 %-ը, գյուղատնտեսության համախառն արտադրանքի՝ 9.9 %-ը, մանրածախ ապրանքաշրջանառության՝ 3.7%-ը և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 3.5%-ը:

Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է (գրադեցնում է ՀՀ տարածքի 12.7%-ը), բնակչության թվով առաջինը: Գտնվում է Հայաստանի հյուսիսում, սահմանակից է Վրաստանին: Բնությունը գեղատեսիլ է՝ հարուստ անտառներով: Մարզում գործում են բազմաթիվ առողջարաններ, հանգստյան տներ: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին: Լոռու մարզի տարածքը զբաղեցնում է պատմական Հայաստանի Գուգարք նահանգի արևելյան կեսը (այս տարածքում 10-11-րդ դարերում գոյություն է ունեցել հայկական անկախ պետություն՝ Լոռու թագավորությունը, մարզի մի մասը հանդիսացել է Չաքարյանների տոհմական կալվածքը):

Շատ են տարբեր դարերից մեզ հասած ճարտարապետական հուշարձանները: Առանձնապես ուշագրավ են Մանահինի ու Հաղպատի համալիրները, Օձունի վանքը, Ախթալայի բերդն ու վանքը, Լոռի քաղաքի ավերակները:

Մարզը ստանում է 1988թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժի գոտու մեջ: Լոռու մարզի կազմում ներառված են 8 քաղաքներ և 122 գյուղեր: Բնակչության գրեթե 70%-ը բնակվում է քաղաքներում:

Լոռին տնտեսապես զարգացած, բազմաճյուղ արդյունաբերություն (հատկապես քիմիական) ու գյուղատնտեսություն (զարգացած են ցեղային անասնաբուծությունը, կաթի արտադրությունը և յուղապանրագործությունը) ունեցող մարզերից է:

1999թ. հունվարի 1-ի դրությամբ պետական ռեզիստրում գրանցված են Լոռու մարզի 6397 տնտեսավարող սուբյեկտներ, որոնցից 3295-ը՝ անհատ ձեռնարկատերեր: Առևտրային կազ-

մակերպությունների 88.7 տոկոսը կոլեկտիվ, խառը և քաղաքացիների սեփականության վրա հիմնված գլխավորապես գյուղատնտեսության, առևտրի և սպասարկումների, վերամշակող արդյունաբերության և շինարարության (75%) օբյեկտներ են:

Մարզկենտրոնը **Վանաձոր** քաղաքն է (նախկինում՝ Մեծ Ղարաքիլիսա, 1930-92թթ.՝ Կիրովական): Բնակչությունը կազմում է 172.7 հազ.մարդ: Գտնվում է Երևանից 120 կմ հեռավորության վրա: Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալով (առաջատարը ճյուղը քիմիական գործարանն է, որը տալիս է քաղաքի արդյունաբերության համախառն արտադրանքի մոտ 30 %-ը, զարգացած են արհեստական մանրաթելերի, սննդի արդյունաբերությունը, մեքենաշինությունը, սարքաշինությունը և այլն), մշակութային և գիտական նշանակությամբ հանրապետության երրորդ քաղաքն է, երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների կարևոր հանգույց: Առողջարանային կենտրոն է:

**Սպիտակ** քաղաքը (21.7 հազ. բնակիչ) գտնվում է Փամբակ գետի ափին (Երևանից 100 կմ): Այն ամբողջությամբ ավերվել է 1988թ. աղետալի երկրաշարժից և աշխարհի շատ երկրների կազմակերպությունների և մարդկանց մարդասիրական օգնությամբ վերականգնվում և վերակառուցվում է: Քաղաքը հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր: Սպիտակում էր գտնվում Հայաստանի միակ շաքարի գործարանը: Ներկայումս գործում են կարի և “Հայվերելակմեքենա” արտադրական միավորումները, հացամթերքի, սննդի, կենցաղ-սպասարկման կոմբինատները, պանրի գործարանը, թռչնաբուծական ֆաբրիկան և այլն:

**Ստեփանավան** (25.0 հազ.բնակիչ) քաղաքում գործում են 8 արդյունաբերական ձեռնարկություններ («Արդկապ», բարձր հաճախականության սարքավորումների, պանրի, հացի, գորգեղենի, կահույքի և այլն): Տարածաշրջանի հայտնի առողջարանային կենտրոններից է:

**Ալավերդի** քաղաքը (24.9 հազ. բնակիչ) գտնվում է Գեբեղ գետի ափին (Երևանից 167 կմ հեռավորության վրա): 19-րդ դարի վերջերին այստեղ է կառուցվել Հայաստանի արդյունաբերության առաջնեկը՝ «Մանես» պղնձաձուլական գործարանը: Այն եղել է մետալուրգիայի ամենահզոր ձեռնարկությունն Անդրկովկասում և տվել է Ռուսաստանում արտադրվող պղնձի 1/4-ը:

**Ախթալա** քաղաքում գործում է բազմամետաղների հարստացուցիչ ֆաբրիկա (ստացվում է կապարի ու ցինկի խտանյութ, որն արտահանվում է և ձուլվում արտասահմանում):

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Վանաձոր	ք. Վանաձոր
Ալավերդի	ք. Ալավերդի
	գ. Ալյներ
Ախթալա	ք. Ախթալա
	գ. Առողջարանին կից
Թումանյան	ք. Թումանյան
	գ. Քոբեր կայարանի
Շամլուղ	ք. Շամլուղ
	գ. Ախթալա
	գ. Բենդիկ
Սպիտակ	ք. Սպիտակ
Ստեփանավան	ք. Ստեփանավան
	գ. Արմանիս
Տաշիր	ք. Տաշիր

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրերի անվանումը</b>
Ագարակ	Ագարակ
Ազնվածոր	Ազնվածոր
Աթան	Աթան
Աինիձոր	Աինիձոր
Ամրակից	Ամրակից
Այգեհատ	Այգեհատ
Անտառամուտ	Անտառամուտ
Ապավեն	Ապավեն
Արդվի	Արդվի
Արծնի	Արծնի
Արջուտ	Արջուտ
	Արջուտ կայարանին կից
